

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Ծառայության մարզային գործակալությունների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային վիճակագրության վարման արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, մարզային գործակալությունների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

Համայնքների և մարզերի կտրվածքով վարչական ռեգիստրների վարման նախադրյալների ձևավորման նպատակով, լրամշակվել են դեռևս 2000թ. մշակված և փորձարկված համայնքի և մարզի անձնագրերի նախագծերն ու դրանց լրացման հրահանգները և Ծառայության մարզային գործակալությունների միջոցով ընտրանքային եղանակով փորձարկվել որոշ համայնքներում՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու ակնկալիքով: Արդյունքների ամփոփումից հետո 2005թ. նախապատրաստվել են վերոնշյալ անձնագրերի նախագծերի վերջնական տարբերակները և ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու, ինչպես նաև տարածքային զարգացման առաջիկա ծրագրերում որպես կարևոր հիմնախնդիր ներառելու նպատակով: Մեկնարկել են «Տարածքային վիճակագրության զարգացման ռազմավարություն» նախագծի մշակման և Հայաստանի Հանրապետության մարզերի կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազայի ձևավորման աշխատանքները:

Ծառայության ինտերնետային կայքում ստեղծվել է տարածքային վիճակագրության առանձնացված էջ, որում գետեղվել են մի շարք վիճակագրական հրապարակումներ տարածքային կտրվածքով, այդ թվում նաև՝ վիճակագրական ատլասների տեսքով:

Տարածքային կտրվածքով գեներերային վիճակագրության զարգացման նպատակով վերանայվել և արդիականացվել են մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթերի ձևեր: